Դ· ՏԱՐԻ ԹԻՒ 1009 ԵՐԿՈՒՇԱԲԹԻ 18 ՄԱՅԻՍ 1887 (Ն. Տ.) 30 ՄԱՅԻՍ 1887 7 ՌԱՄԱԶԱՆ 1304

20 ՓԱՐԱ (ԾԱՆՐ ՏՆՕՐԻՆՈՒԹԻՒՆ)

ԱՄԷՆ ԳԻՐ ՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԷՏՔ Է ՈՒՂՂԵԼ
ԱՌ Ի ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ
ԱՐԵՒԵԼՔ ՕՐԱԳՐԻ
Գալաթիա, Նորատունկեան-խան

Direction du journal AREVELK
Noradounghian Han, Galata
CONSTANTINOPLE

ԱՐԵՒԵԼՔ
ՕՐԱԳԻՐ
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ

20 ՓԱՐԱ (ԾԱՆՐ ՏՆՕՐԻՆՈՒԹԻՒՆ)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Կ. Պոլսոյ համար Տարեկան		160
» Վեցամսեայ		80
» Եռամսեայ		40
Գաւառաց եւ տեղական Թղթատարով տարեկան		240
Գաւառաց համար եւ տեղական Թղթատարով վեցամսեայ		120
Օտար երկիրներ, տարեկան	Ֆրանք	56
» վեցամսեայ		28

Les annonces sont reçues à l'Eastern Agency place Karakeuy Deïrmen Han Constantinople.

Կ. ՊՈԼԻՍ, 18 ՄԱՅԻՍ, 1887

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

ՖՐԱՆՍԱ, ՌՈՒՍԻԱ ԵՒ ԳԵՐՄԱՆԻԱ

Քաղաքական յայտնութիւնք օրուան խնդիրն են յԵւրոպա։

Ինչ է պատճառն որ Ֆրանսա կը հետեւի ա՛յնչափ ռուսասէր քաղաքականութեան մը, եւ ֆրանսական ազգն ա՛յնչափ համակրանք կը տածէ Ռուսիոյ վրայ։

—Որովհետեւ, 1875ին, ազգային մեծ ճգնաժամի մը մէջ, Ռուսիա Ֆրանսայի օգնութեան եկաւ, կասեցընելով զԳերմանիա, որ կը պատրաստուէր վճռական հարուած մը տալ Ֆրանսայի։

Եւ յանմիջեւեալ Ռուսիա եղած է հաւասարակշռող ոյժն, որ Գերմանիոյ Թող չի տար Ֆրանսայի վրայ ինկնալ։

Զայս պատմական ստուգութեամբ կ'ապացուցանէ Զօր. Լը Ֆլօ, ֆրանսական դեսպան 1875ին ի Բեդերսպուրկ, հրատարակութեան տալով կարեւոր պաշտօնագրեր, որք կը վերաբերին նոյն տարւոյ ֆրանքօ-գերմանական մեծ տագնապին։

Որովհետեւ մեր Քաղաքական Տեսութեանց եւ Լրոց մէջ մերթ ընդ մերթ ակնարկած ենք այս երեւելի դէպքը, օգտակար կը համարինք ընթերցողաց ծանօթացնել Լը Ֆլօ զօրավարին վաւերական յայտնութիւնները։

1874 տարւոյ սկիզբէն, Պ. Պիզմարք բարկութեամբ կը տեսնէր Ֆրանսայի արագ վերականգնումն։ Հինգ միլիառ ֆր. տուգանքը շուտով վճարելէն ետքը, Ֆրանսա անհաւատալի փութաջանութեամբ եւ յաջողութեամբ ի գլուխ կը հանէր իւր զինուորական, տնտեսական եւ վարչական վերակազմութեան գործը։ Պ. Պիզմարքի բարկութիւնն ի յայտ կուգար կառավարական լրագրաց հակաֆրանսական բուռն հրատարակութեամբք, նման անոնց որոց մէկ ճաչակն առին Արեւելքի ընթերցողք քանի մը ամիս առաջ, Զինուորական Եօթնամեակի վիճաբանութեան միջոցին։

Կորչաքով Իշխան կ'ըսէր ֆրանսական դեսպանին։

«Այս ամենայն կատակերգութիւն մ'է, ոչ այլ ինչ, եւ պիտի վերջանայ ի նպաստ գերմանաց, զի Պիզմարք մինչեւ վերջը միայնակ չի կրնար խաղալ զայն։»

Նոյն կարծիքն ունէր Աղեքսանդր Բ.

«Խօսքը մէջերնիս մնայ. Պիզմարքի կողմէ հնարք մ'է այս՝ ուշադրութիւն դրաւելու եւ ներքին դժուարութիւններէն զերծ մնալու համար։(*) Բայց ապահով եղիք. Ո՛չ ոք պատերազմ կ'ուզէ, եւ պատերազմ չպիտի ծագի, կ'ըսէր Ցարն։»

Եւրոպիոյ ամեն Օրքուններաց կողմէ առ Ֆրանսա արտայայտեալ համակրութեան եւ Բարիզի Կառավարութեան իմաստուն քաղաքականութեան շնորհիւ, փոթորիկն անցաւ այն տարին։ Զօր. Լը Ֆլօ արձակուրդով Ֆրանսա վերադարձաւ, եւ Նոր Սահմանադրութեան վերահաստատման խորհրդարանական աշխատութեանց մասնակցեցաւ։ Հանրապետութիւնը վերջնապէս հրատարակեցաւ 1875ին, (մէկ քուէի առաւելութեամբ)։

Ապրիլ ամսուն մէջ, երբ զօրավարը Բեդերսպուրկ վերադառնալու վրայ էր, յանկարծակի եկաւ Նախագահ Մաք-Մահոնէ գիտուածաստանալով գաղտնի տեղեկագրաց ծրար մը, որք բնաւ տարակոյս չէին Թողուր Թէ Գերմանիա միտքը դրած էր Ֆրանսայի դէմ պատերազմ բանալ, պաշտօնական յայտարարութեամբ կամ առանց յայտարարութեան։ Եւրոպիոյ ամենամեծ անձնաւորութեանց մին, Իշխան մը, (որոյ անունը զօրավար-դեսպանը պարտ կը համարի ծածկել,) կը գրէր. «Ձեր վրայ [illegible]»։ Եւ յետոյ կ'իմացնէր. Տրամադրութիւնք [illegible] (1875) [illegible]։

Դեսպանը փութով պնդութեամբ վերադարձաւ Բեդերսպուրկ, յոգնած անկողին ինկաւ, եւ անկողինն էր դեռ, երբ առտուն կանուխ Կորչաքով Իշխան ֆրանսական դեսպանատունն եկաւ։ Կորչաքով եկած էր դեսպանին սիրտն հանդարտեցնելու։ Բարիզի ռուս դեսպան Օրլով Իշխան կ'իմացնէր Թէ Ֆրանսացիք մեծ վախի մէջ են. «Բոլոր այս գերմանական կարծեցեալ սպառնալեաց դէմ ձեր պատասխան Թո՛ղ ըլլայ—[illegible]»։ Այս խորհուրդը կուտար Կորչաքով։

—«Լա՛ւ, բայց տեսէ՛ք, Գերմանիա՝ ձիերու արտածումն արգիլելէն զատ, ամենուրեք փութաջանութեամբ յառաջ կը վարէ ամեն տեսակ սպառազինութիւններ, ինչո՞ւ կը զարմանաք մեր մտահոգութեան, Խորհեցէ՛ք անգամ մը Թէ ի՛նչ [illegible] մը պիտի ըլլայ մեզ, երբ մեր զինուորական, ելմտական եւ վարչական կազմակերպութիւնը դեռ չլմնցուցած, յանկարծական պատերազմ մը պայթի մեր գլխուն։ Մեր Կառավարութիւն յոյժ շրջահայեաց ընթացք մը կը բռնէ պատերազմի պատրուակ չտալու համար...։

—«Ճշմարիտ է, (կ'ըսէ Կորչաքով,) եւ բոլոր աշխարհ կը վկայէ ձեր խոհականութեան։

—«Բայց ի՛նչ անագորոյն խաղ մ'է ամեն օր գերման լրագրաց մէջ նշաւակել զմեզ իբրեւ Թշնամի Եւրոպիոյ խաղաղութեան, իբրեւ պատրաստ քիչ օրէն վրէժխնդրական պատերազմ մը բանալու։

—«Միթէ այդ տեսակէտներ Ռուսիոյ համար ալ չե՞ն գրուիր։ Քանի մը ամիս առաջ զրոյց չտարածեցի՞ն Թէ Անգլիոյ հետ պատերազմի բանալու վրայ ենք. Այս ամեն վատդի զրոյցք կը ելնեն Պերլինի միեւնոյն գործարանէն, ո՛ գիտէ ի՛նչ նպատակաւ։

Ֆրանսացի դեսպանն հայրենասէր եռանդեամբ կը խօսի անսահման զոհողութեանց վրայ, զորս իւր ազգ, անպատրաստ վիճակին մէջ իսկ, չպիտի վարանի ընել՝ դէմ դնելու համար գերմանական անարդար յարձակման մը։

—«Հապա բոլոր Եւրոպիոյ պարտա՛նքն այդպիսի յարձակման մը դէմ, պարտաւանք զոր ո՛չ մէկ Տէրութիւն պիտի իշխէ հրաւիրել իւր վրայ։»

—«Պայմանաւ սակայն, վերելի Իշխանս, որ այդ պարտաւանք պաշտօնական չմնայ լոկ։ Վստահ ենք Թէ Եւրոպա պիտի պարտաւէ գերմանական յարձակում մը։ Կ'ապաւինինք մանաւանդ Վեհ. Ցարին եւ Ձեր Բարձրութեան համակիր միջնորդութեան, եւ միւս կառավարութեանց արդարասիրութեան. զի եթէ Թոյլ տրուի գերմանօ-ֆրանսական նոր պատերազմի մը, վեց շաբաթէն չպիտի վերջանայ, Թերեւս տասն տարի պիտի տեւէ. եւ ընդհանուր պատերազմի կերպարան պիտի առնու։

Զօր. Լը Ֆլօ նաեւ կը գանգատի Թէ Պերլինի մէջ Ֆրանսայի դէմ յանցանք կը համարուի օր մը զԱլզաս-Լօռէն վերադարձնելու յոյսը։

—«Վա՛յ, ինչո՞ւ կը գանգատիք. իրե՛նք այնպէս ուզեցին. ո՞վ կրնայ պարտաւել զձեզ Թէ այնպիսի յոյս մը կը տածէք. եթէ ես Ֆրանսացի ըլլայի, ես ալ կը տածէի այդ յոյս։

—«Ալզաս եւ Լօռէն Գերմանիոյ եւ մեր մէջ գլխաւոր խնդիրն են, որ կը յուսամ Թէ օր մը խաղաղապէս եւ դիւանագիտապէս պիտի լուծուի յօգուտ Եւրոպիոյ։ Ուրիշ բաղձանք չունինք մենք։

—«Ժամանակի եւ պատեհութեան խնդիր։ Կարծեմ ձեր ըսածին պէս կրնայ ըլլալ Լօռէնի համար (Մեծ)։ Ալզաս, որ բազմաթիւ գերմանական տարրեր կը պարունակէ, աւելի դժուարութիւն կրնայ պատճառել։ Ինչ եւ իցէ, ապահով եղիք Թէ Ռուսիա ամեն ջանք պիտի ընէ զսպելու Պերլինի անհամբերութիւնն։»

Կորչաքով հետեւեալ օրը կ'իմացնէ Լը Ֆլօ զօրավարին Թէ Ցարն հետ Պերլին պիտի երթայ, ուր Պիզմարք Իշխանին պիտի խօսի, մինչ Աղեքսանդր Բ. ազդեցութիւն պիտի բանեցնէ Վիլհելմ կայսեր մտաց վրայ։

Ցարն ունկնդրութիւն կը շնորհէ ֆրանսական դեսպանին։ Նախ հաւանութիւն կը յայտնէ Հանրապետութեան վերջնական հաստատման համար ի Ֆրանսա, համակիր ոճով կը խօսի Ֆրանսայի ներքին գործոց վրայ, կը գովէ զՄարաջալ Մաք Մահոն, եւ երբ դեսպանը կը գանգատի Թէ, ի Ֆրանսա մնաց մէջ տիրող հանդարտութեան հակառակ, Պ. Պիզմարք չի դադրիր հոգ պատճառող միջադէպեր գրգռելէ, Աղեքսանդր Բ. կը պատասխանէ.

«Կը հասկնամ ձեր մտահոգութիւն, «եւ կը ցաւիմ անոր պատճառներուն «վրայ։ Համոզուած եմ սակայն Թէ «Գերմանիա հեռի է պատերազմ ուզելէ, եւ Պիզմարքի բոլոր այս ցաւալի «գործերն ո՛չ այլ ինչ են բայց եթէ «խորամանկ հնարքներ՝ իւր իշխանու«թիւնն եւ առաւել զօրացնելու հա«մար, եւ երեւակայական վտանգներու «արտայայտութեամբ ինքզինք աւելի «եւս հարկաւոր մարդ մը կարծեցնելու «համար։ Ստուգապէս գիտեմ Թէ Վիլ«հելմ կայսր բացարձակապէս հակա«ռակ է նոր պատերազմի, եւ եթէ Ն. «Վեհափառութիւն վախճանի, կար«ծեմ Թէ գահաժառանգ կայսրորդին «ես իւր հօր պէս հակառակ պիտի լի«նի պատերազմի։ Ապահով եղիք Թէ «ես եւ ձեզ պէս խաղաղութեան կը «բաղձամ, եւ ձեռքէս եկածը պիտի «ընեմ որ խաղաղութիւնը չվրդովի։»

Ահա՛ ֆրանսական դեսպանին ուշադրութեան պատասխանը.—

«Վեհափառ Տէր, Ֆրանսա եւս այդ կը բաղձայ, եւ իրեն սպառնացող վտանգներէն զերծանելու համար՝ կ'ապաւինի Ձեր միջամտութեան Ձեր Վեհափառութեան, որոյ պատուաւոր խօսքն այսօր այնչափ մեծ ազդեցութիւն ի գործ կը դնէ յԵւրոպա»

Զօրավար Լը Ֆլօ կը յարէ Թէ, Ռուսիոյ համար մեծ պատիւ մ'է որ՝ առանց Թնդանօթ մը արձակելու՝ շնորհիւ միայն իւր Կառավարութեան իմաստութեան եւ Ցարին հզօր բնաւորութեան, ստացած է յԵւրոպա առաւելակշռութիւն մը, որ ի Պերլին հաշուի պիտի առնուի անշուշտ, եւ որոյ վրայ Ֆրանսա, ինչպէս միւս դաշնիքներ, դրած են իրենց մեծագոյն յոյս։

Աղեքսանդր Բ. շատ կ'ախորժի այս փաղաքշական դիտողութենէ, եւ Գերմանիոյ պատրաստութեանց վրայ խօսելով, կը բացատրէ Թէ անոնք գերման բանակին զինուց փոփոխման հետեւանք կրնան ըլլալ. «Ինչպէս դուք իրաւունք ունիք, Գերմանիա եւս իրաւունք ունի պատրաստուելու։»

—«Բայց, Վեհ. Տէ՛ր, երկոցունց պայմանք նոյն չեն։ Պատերազմէն ետքը Գերմանիոյ ոյժերն անվթար մնացին, մինչեւ իսկ Թերեւս աւելցան, մինչ մեր բոլոր ոյժեր խորտակեցան պատերազմին մէջ։

—«Ճշմարիտ է. Ձեմ պարտաւէր «զձեզ։ Բայց ցորչափ դուք պատճառ «չտաք, ո՛չ մէկ Տէրութիւն կրնայ պա«տերազմ բանալ ձեզ դէմ, եւ ահա «պատճառ տուած չունիք։ Իսկ եթէ «Գերմանիա յանդգնի պատերազմ բա«նալ առանց պատճառի, կամ չնչին «պատրուակներով, նոյն վիճակին մէջ «պիտի գտնուի յորում գտնուեցաւ «Պոնաբարդ 1870ին։»

Եւ ականջներուն տակէն կը յարէ Ցարն. «Այո՛, եւ քա՛ջը գլխուն այն ա«տեն։»

«Ուրեմն, մի՛ վախնար. Ապահով«ցուցէք ձեր Կառավարութիւնը. Վըս«տահցուցէք խօսքիս։ Մեր երկուց եր«կրաց շահերը նոյն են, եւ եթէ օր մը «ծանր վտանգ սպառնայ ձեզ,—որ չեմ «կարծեր,—շուտով պիտի իմանաք, «եւ ինծմէ պիտի իմանաք։»

Մինչ այս մինչ այն, ի Բեդերսպուրկ, հասարակաց կարծիքն եւ դեսպանական մարմինը միաձայնու համակրանք կը ցուցնէին Ֆրանսայի եւ դժգոհութիւն՝ Պերլինի խռովարար հընարքներէն։ Պիզմարքի կուսակից մը օր մը կ'ըսէր.

—«Անշուշտ, քիչ մը իրաւունք ունիք։ Բայց նաեւ հաշուի պէտք է առնել Պիզմարք Իշխանին վատառողջութիւնն եւ ջիղերը։

Եւ խօսակիցը կը պատասխանէր.

—«Ա՛, չգիտէի Թէ պետական մարդու մը ջղային եւ մաղձային վիճակին եւս պէտք է եղեր նկատել դիւանագիտական փաստ մը»

Ցարը ճեմավայրի մը մէջ կը հանդիպի Ֆրանսայի դեսպանին. «Ի՞նչպէս, միտքերն հանդարտելու վրայ են, այնպէս չէ՞»։—«Այո՛, ի Բարիզ վստահութիւն կայ Թէ Ձեր Կ. Վեհափառութիւն Պերլինի մէջ չափաւորութեան եւ հաշտարարութեան խօսքեր պիտի ընէ. այն պատճառաւ միտքերն հանդարտելու վրայ են»։—Եւ Ցարը կը պատասխանէ. «Անշուշտ, անշուշտ. [illegible] պիտի ըլլամ հոն»։

Այս միջոցիս, Պ. Պիզմարք մեծ ճիգ մը կ'ընէր Ռուսիան Գերմանիայէն բաժնելու համար։ Զ.Պ. Ռատովից կը ղրկէր Բեդերսպուրկ, իբր Թէ Եւրոպիոյ ընդհանրական առկախ խնդրոց կարգադրման համար, բայց իրօք իմանալու համար Թէ Ռուսիա կը խոստանա՞ չէզոք կենալ եթէ Գերմանիա պատերազմ բանայ Ֆրանսայի դէմ, Ռուսիոյ Թողլով ամեն ազատութիւն Արեւելից կողմէ։ Պ. Ռատովից անուղղակի հարցումներով կը փորձէ տրամադրութիւններն իմանալ, եւ պատասխան կ'ընդունի. «Մեր ունեցածէն աւելի բան չենք «խնդրեր, եւ Արեւելից մէջ հետամուտ «ենք միայն գտնուածին պահպանման, «հանդերձ խաղաղութեամբ, որ նոյնչափ «հարկաւոր է այդ երկրաց դժբախտ «քրիստոնեայ ժողովրդոց, որչափ «ուրիշ ամեն երկիրներու ժողովրդոց։»

Պ. Ռատովիցի պաշտօնն ա՛յնչափ ի դերեւ կ'ելնէ, որ երբ Պերլինի դաշնիքը ռուս Կառավարութենէն (ըստ Օրքուններաց սովորութեան) պատուասխան կը խնդրէ Պ. Ռատովիցի համար, Ցարը բացարձակ կը մերժէ։

Տրքազ Դուքոն, արտաքին գործոց նախարար Ֆրանսայի, [illegible] նամակ մը կը գրէ առ Զօր. Լը Ֆլօ, խորին մտահոգութիւն արտայայտող. 48 ժամէ հետէ քիչ մը հանդարտութիւն կը տիրէր Պերլինի մէջ, Պ. Ռատովիցի պաշտօնին անյաջողութեան վրայ, այն է՝ շնորհիւ Ռուսիոյ ընթացքին։ Բայց վայրւան համար վստահութիւն չի կար։

«Ն. Կ. Վեհափառութեան (Ցարին) կը վերաբերի ամբողջացնել եւ զօրացնել իւր գործ։ Բազմիցս ըսած եմ ձեզ Թէ՝ իմ տեսութեամբ՝ Ռուսիոյ Կայսրն աշխարհի խաղաղութեան տէրն է. եւ երկար ժամանակի մը համար կրնայ ապահովել խաղաղութիւնն, ի Պերլին ազդու լեզու մը գործածելով։ Պ. Ռատովիցի ձախողած արտաքոյ վարդապետութիւնը զայրոյթ պատճառած է այս մեծ վեհապետին (Աղեքսանդր Բ.ի) պարկեշտ եւ ուղիղ խղճին, եւ արժան եղած անարգական ընդունելութիւնը գտած է ի նմանէ։» Տրքազ Դըքոն մեծ վախն այն էր Թէ Պերլին կրնայ սքօղել իւր չար դիտումներ, եւ պատերազմը կատարեալ իրողութեան կրնայ փոխել՝ Ռուսիոյ ժամանակ չտուած որ միջամտէ ի նպաստ Ֆրանսայի։ «Ցարը բարեհաճեցաւ խոստանալ ձեզ Թէ, երբ վտանգ մը ծագի, ինքն իսկ իմաց պիտի տայ մեզ. հապա եթէ Ցարն ի՛նք խաբուի՞ եւ յանկարծակի գայ»։

Դեսպանն, իւր մեծաւորին երկիւղալի խօսքերէն վրդոված, կ'երթայ սիրտը բանալ Կորչաքովի։ Հակառակ դիւանագիտական սովորութեանց, կ'ըսէ նմա կարդալ Տըքազի անձնական նամակը։ Կորչաքով, տեսնելով Թէ դեսպանը քանի մը տողեր կը յապաւէ, կը պնդէ որ ամբողջը կարդայ. «Ձեր եւ իմ մէջ գաղտնիք պէտք չէ կենայ։»

Ցետոյ կ'ըսէ. «Խօսքերը լսնալու ժամանակը չէ այլ եւս. պէ՛տք է որ Կայսրը տեղեկանայ բովանդակ ճշմարտութեան, եւ այսօրինակ պաշտօնագրեր ամենէն աւելի կը պարզեն ճշմարտութիւնն։ Ես կը ճանչեմ իմ Տէրս. նա պիտի գնահատէ ձեր վստահութիւնն, ուրեմն, տուէ՛ք ինձ այդ բոլոր գաղտնի Թուղթեր, որ իրեն յանձնեմ։» Զօր. Լը Ֆլօ կը յանձնէ իւր Թղթապանակն ամբողջ, որ Տրքազ Դըքոյի երկու գաղտնի նամակներէն զատ կը պարունակէր Պերլինի ֆրանսական դեսպանին մանրամասն տեղեկագիրը։ Կորչաքով ըսած էր որ Ցարը, խոստանալով Թէ՝ երբ վտանգ մը սպառնայ Ֆրանսայի՝ ինք առաջին պիտի ըլլայ իմաց տուող, մտած էր ծանր յանձնառութեան մը տակ, որ Գերմանիոյ նկատմամբ օր մը փափուկ դիրքի մէջ կրնար դնել զՌուսիա։ Զօր. Լը Ֆլօ կը փափաքէր որ Ցարին այս խոստումը չկշտուէր։

Կորչաքով, այս տեսակցութենէ ետքը, կը գրէ առ դեսպանն.

«Զօրավա՛ր, Կայսրն այս առաւօտ իւր ձեռօք ինձ վերադարձուց պաշտօնագրերը զորս վստահած էիք ինձ, եւ պատուիրեց որ շնորհակալութիւն յայտնեմ ձեր վստահութեան այս ապացոյցին համար։ Ն. Կ. Վեհափառութիւն յարեց Թէ կը հաստատէ ինչ որ բանիւ բերանոյ խօսած էր ձեզ։»

Եզրակացութիւն.— Ցարը Պերլին գնաց Կորչաքովի հետ։ Կորչաքով տեսնուեցաւ Պիզմարքի հետ. Աղեքսանդր Բ.՝ Վիլհելմի հետ, եւ յօրէ անտի Գերմանիա դադրեցաւ իւր պատերազմի սպառնալիքէն Ֆրանսայի դէմ։ Եւ սակայն, անկէ առաջ Պիզմարք ըսած էր Օրլով Իշխանին.

«Պատերազմ հրատարակելու կամք «չունինք. Բայց Ֆրանսա շատ շուտով «կը վերակազմուի Թէ՝ զօրաց եւ Թէ՝ «ռազմանիւթոց կողմէ. Ուստի, երաշ«խաւորութիւն մը ձեզ պիտի բե«րենք, ապահովութեան տեղ մը. [illegible]»

Տրքազ Դուքոս, 1875 Մայիս 17, երբ փոթորիկն անցած էր, կը գրէ առ Զօր. Լը Ֆլօ Թէ Ռուսիա, ի Պերլին իւր ազդեցութիւնը գործածած պահուն, համոզած էր զԱնգլիա՝ Իտալիոյ եւ Աւստրիոյ կառավարութիւններն յորդորելու որ նոյն մտօք ջանքեր ընեն Վիլհելմ կայսեր Կառավարութեան քով։ Աւստրիա ինքն իրեն համար ա՛յնչափ կը վախնար, որ ուրիշի համար միջնորդելու համարձակութիւն չունեցաւ։ Անգլ. Դաշնիքն ալ համոզելու համար, Ռուսիա հրաման ղրկեց Ասիոյ բանակին որ դէպի Մերվ յառաջխաղացումը դադրեցնէ։ «Ի մի բան, վեց տարիէ հետէ առաջին անգամ, Եւրոպա արթնցաւ։ Ի ձայն Ռուսիոյ, Եւրոպա միաբանութիւն մը կազմեց, եւ իւր միաբանութիւն վճռական արդիւնք տուաւ։ Պ. Պիզմարք չփորձեց վիճել. շատացաւ այս չար դիտումները վերադրելով Մոլդքէի, եւ հերքեց զայնս։ Ներկային համար ապահովեալ, վստահութեամբ կընանք դիտել զապագայն։ Աղեքսանդր Կայսր կարդալ պիտի տայ զիւր գործ, եւ Եւրոպա սովոր է հետեւիլ նմա։»

(*) Արդէն այն ատենէն Զինուորական Եօթնամեակի խնդիրը կը յուզուէր Գերմանիոյ մէջ։

—)(1)(—

ԹԵՐԹՕՆ ԱՐԵՒԵԼՔԻ

ՍԱԴԱՅԵԼԻ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆԸ

ՌՈՒՍԵՐԷՆԷ

Ինչո՞ւ մարդիկ կը բնակին երկրի վրայ, որ զզուելի է իրենց համար, եւ չեն ձգտիր դէպի երկինք որ լաւագոյն է։—Սատանայի ճանապարհորդութիւնն երկրի վրայ այն խնդրի լուսաբանութեան համար։—Սատանան հիւր կերթայ գերմանացի գիտնականի մօտ.—Սատանան ռուս մեծերի մօտ.—Սատանան ֆրանսացի երեսփոխանի մօտ։—Սատանան անգլիացի գործարանատէրի մօտ.—Սատանան ամերիկացիի մօտ.—Սադայելի վերադարձն ի դժոխս։

«Այո՛, իմ այս հետաքրքրութիւնն յիրաւի պիտի սպանէ զիս, անշուշտ պիտի սպանէ... Այդ հարցի լուծման համար կը մտածեմ կատարելապէս, կը յոգնիմ, այս ու այն կողմ կը վազվզեմ անդադար ու կը տանջուիմ։ Ինձ ի՞նչ այդ յիմարամիտ ու պարծենկոտ մարդիկն, ի՞նչ ի զուր տեղ նոցա համար կը չարչարուիմ։ Ի՞նչ կ'ուզէիմ ունենալ անոնցմէ, մինչդեռ նորա անհամեմատ նուազ գիտեն քան մենք ամենքս, բոլոր սատանաներն, որոց նկատմամբ նոցա միշտ յաւակնոտ արհամարհանք կ'արտայայտեն... օրինակի համար ընենք այսօր. այսօր տանջուեցայ բոլորովին, շրջեցի համայն երկրագունտն ու հազիւ հազ կարողացայ ողջ ողջ վերադառնալ դժոխք, եւ սակայն ի՞նչ շահեցայ, ի՞նչ գիտցայ.—Պարզապէս ոչինչ... Միթէ արդէն ծիծաղելի ալ չէ՞, կ'աղաչեմ ըսէք, ես, ես որ ահասիկ ութսուն եօթն հազար տարի է կ'ապրիմ շարունակ այս դժոխքի մէջ եւ այն եւս իբր ընդհանուր պետ դժոխային համայն բանակեր,—յանկարծ ուզեցի գիտնալ Թէ ինչո՞ւ այս մեծամիտ, այս անապարծ մարդիկն, որ կ'անուանեն զիրենք Թագաւոր բնութեան, պսակ արարչագործութեան եւ ով գիտէ տակաւին ինչ,—յանկարծ ուզեցի գիտնալ Թէ ինչո՞ւ նոքա ամենը կը բնակին, իբր չղժոխային իրենց երկրի վրայ, զոր միեւնոյն ժամանակ ամենն ալ կ'արհամարհեն, եւ դէմ մի անգամ չեն խորհիր երթալ... իրենց մատարանած երկինքն։ Արդ, ըսէք կ'աղաչեմ, միթէ արդարեւ ծիծաղելի չէ՞ այս. ինչո՞ւ ալ ինչ... ի՞նչ գործ ունիմ այդ մարդոց հետ։ Կ'ուզեն երկրի վրայ ընթանալ, Թող ընթանան, մեզ աւելի լաւ։ Որպէս միշտ այսուհետեւ եւս նոցա հաշուով կ'ապրինք... Բայց ի՞նչ ըսես այս Թշուառական բնաւորութեանս։ Այդ հետաքրքրութիւնս կարծես միասին ծնած լինի իմ հետ։ Այս ութսուն եօթն հազար տարուան մէջ ամենամանրամասն կերպիւ հետազօտեցի բոլոր դժոխքն, իսկ այժմ եկ տես որ հալ ու մաշ կը լինիմ իմանալու Թէ մարդիկ ինչո՞ւ կ'ապրին երկրի վրայ,—հալ ու մաշ կը լինիմ եւ անկարող եմ իմանալ... պարզապէս չեմ կարող տեղս նստիլ հանգիստ։ Ուստի ինչ ընեմ, պատրաստուեցայ ու ճանապարհ ընկայ։

Լսած էի որ մարդոց մէջ ամենէ գիտնական ազգը կը համարուին Գերմանացիք. ուստի որոշեցի ուղղակի երթալ նոցա մօտ, լիայոյս լինելով Թէ անոնցմէ կատարեալ պատասխան պիտի կարողանամ ստանալ գլուխս տանջող հարցի վերաբերեամբ։ Գիտէի նմանապէս Թէ մարդոց մէջ գոյութիւն ունի [illegible] ըսուած մի բան, որի համեմատ օտար մէկն իւր նախկին սովորութեամբ, իւր նախկին կարգ ու կանոնով բնաւ իրաւունք չունի մուտ գործելու մի ուրիշ երկիր։ Թէպէտ եւ ինձ կարի անհաճոյ էր փոխել մեր վայելչական կերպարանքն եւ առնել նոցա ծիծաղելի դէմքն ու ձեւը, բայց ի՞նչ կարող էի ընել, վերոյիշեալ պատճառաւ պարտաւորեցայ յարմարիլ, խոյս տալու համար դիւանագիտական այլ եւ այլ Թիւրիմացութիւններէ։ Մի կողմ ձգեցի իմ [illegible] կերպարանքն, որով այս յիմար մարդիկը կ'անուանեն մեր բարեձեւ երեսն, եւ դարձայ շնչաւոր խաղալիկ։ Հագայ մի լոյն տարատ, սեւ երկայնատուան վերարկու, յարդեայ գլխարկ, ձեռս առի հաստ գաւազան մը ու սկսայ ծխել հաստ գլանիկ. դարձայ ճիշտ ու ճիշտ գերմանացի gelehrter, այնպէս որ նոյն իսկ սիրասուն փեսայս չը պիտի կարենար ճանաչել զիս, այնչափ փոխուած էի։

Գիտնական գերմանի մը դրան զանգն հնչեցի. Դուռը բացաւ բարեկազմ կին մը այնչափ ճեղքելի, որ առաջին հայեացքէն կարծեցի Թէ մեր վհուկներէն մէկն է, բայց յետոյ աւելի մօտէն նայելով գիտցայ որ այնուամենայնիւ տակաւին շատ հեռու է մերոնց գեղեցկութեան հասնելու։ Յարգելի կինն պատասխանելով հարցիս ըսաւ. der Doctor ist zu Hause եւ առաջնորդեց ինձ գիտնականի սենեակն, ուր դիմաւորեց զիս ծերունի, մումիայի պէս լղար գերմանացի մը եւ հարցուց.

Ո՞ւմ հետ պատիւ ունիմ տեսակցելու։

Նախ խորհեցայ [illegible] գիտնականի անունով անուանել զիս, բայց յետոյ վախցայ մտածելով Թէ մի գուցէ այս Գերմանացիք [illegible] այնչափ գիտնական լինին որ անծանօթն ալ ճանաչեն, այս պատճառաւ լաւագոյն համարեցի ուղիղն ըսել։

—Սատանայի հետ—պատասխան տուի անվրդով։

—Ներեցէք կ'աղաչեմ, լաւ չլսեցի կարծեմ...

—Սատանայի հետ—կրկնեցի աւելի բարձր ձայնով։

—Հը՜մ... իրաւ որ չեմ մտաբերեր այսպիսի գիտնական հեղինակութիւն մը... ներեցէք, կ'աղաչեմ, յիշողութիւնս... գիտէք... ի՞նչ հնութիւններով կ'զբաղիք մասնաւորապէս—եգիպտակա՞ն Թէ ասորական...

—Ինչո՞ւս պէտք ձեր հնութիւններն, երբ ես ինքս ութսուն եօթն հազար տարի...

—Դուք կ'ենթադրէք որ եգիպտական եւ ասորական հնութիւնները կը հասնին այդպիսի խորին ու հեռաւոր ժամանակ՞... սակայն վերջին հետազօտութիւններն... եւ, վերջապէս, պեղումներն։

—Ի՞նչ կ'ըսէք կ'աղաչեմ, ես մինչեւ անգամ չեմ ալ խորհիր ենթադրութիւններ ընել ձեր հնութեանց մասին։ Ես ինքս կ'ապրիմ ութսուն...

—Հա՛, այսինքն, դուք կը խորհիք, այսպէս ըսած, փիլիսոփայաբար... Թէ դուք այժմ խորասուզուած էք...

—Օ՛ Տէր Աստուած... ակամայ գոչեցի յուսահատաբար, այս ի՞նչ այլանդակ մարդ է։

—Սակա՛յն, mein Herr...

—Ո՛հ վերջապէս, հասկցէք, սատանան եմ կ'ըսեմ ձեզ, սատանա՛, Teufel...

—Der Te-u-f-el?... nein!..

—Ի՞նչ փարայ արժէ ձեր nein-ն, քանի որ այս է...

—Կարելի բան չէ այս... Das ist kann nicht?!

—Ինչո՞ւ հը՞...

—Այնպէս... Թէեւ այս չէ՛ր [illegible] իմ մասնագիտութեան եւ արդէն ինչպէս կը տեսնէք ես կ'զբաղիմ եգիպտական հնութիւններով, բայց ձեր յարգելի կերպարանքէն դատելով, կը կարծեմ Թէ դուք նմանապէս... Այնուամենայնիւ պարտիմ ըսել ձեզ Թէ սատանայ եղած չէ եւ չկայ ալ։

—Եկ ու բան հասկցուր ասոր... ի՞նչ ղուրս կուտաս... հապա ես ո՞վ եմ։

—Դու... դուք... բոլորովի՛ն ի զուր ձեր անձն գաղտնի կը պահէք ինձմէ...

—Ի՞նչ կ'ըսէք. ես ծածկելու բան մը չունիմ, ես բուն իսկ սատանան եմ։

—Թող այդպէս լինի... սակայն, mein Herr, չափազանց զբաղեալ եմ...

—Ուստի խնդրեմ այլ եւս անհանգիստ չը լինիք։ Սատանան եմ կամ ոչ, առ այժմ Թողունք այս, միայն այնպէս համարեցէք Թէ օտարական մ'եմ...

—Հա՛, այն բոլորովին ուրիշ խնդիր. հիւրընկալութիւնը իւրաքանչիւր ճշմարիտ գերմանացիի սրբագոյն պարտաւորութիւն է... Դեռ եւս հին ժամանակի գերմանացիք...

—Ա՛յ, հիմա շատ լաւ։ Այժմ նստեցէք ու խօսակցինք։

—Դուք մասնաւորապէս, ի՞նչ բանի համար եկաք, ներեցէք որ հարցնեմ։

—Ինձ շատ հետաքրքրութիւն կը պատճառէ եւ կ'զբաղեցնէ միակ խնդիր մը...

—Հա՛, այո՛, այո՛, անտարակոյս, դուք մտադիր էք խօսիլ Ռամզէս Բ.ի գաւազանի գլխի վրայ, որ վերջերս գտնուեցաւ... Սակայն պարտիմ ըսել ձեզ որ այդ խընդիրն... շատ... շատ վիճելի է տակաւին... Թէեւ...

—Ձեմ հերքեր վիճելի լինելն, բայց ես...

—Բայց դուք այնուամենայնիւ կ'ենթադրէք Թէ զայն կարելի՞ է լուծել ի նպաստ... գաւազանի գլխին։

—Ո՛չ, անիծեալ լինիք դուք ալ, ձեր գաւազանի գլուխն, ես գործ չունիմ այդ տեսակ խնդիրներու հետ եւ ոչ ալ մտադիր եմ լուծում տալ ի նպաստ կամ անընպաստ. զիս կը հետաքրքրէ բոլորովին մի այլ խնդիր

—Մի այլ խնդի՞ր... եւ նոյնպէս իմ մասնագիտութեա՞ն վերաբերեալ...

—Իրաւ որ չը գիտեմ։ Միայն Թէ իբր ճշմարիտ գերման եւ հիւրասէր մարդ պարտիք մինչ ընել ինձ։

—Ի՞նչ է, խօսեցէք...

Գ. ՏՕՆԱԳԵՏԵԱՆ
(Շարունակելի)

Ցրքաղ Դուքսը կը հաստատէ , ի մի բան թէ «Ալեքսանդր կայսր և Կորչաքով «Իշխան փայլուն և անժխտելի իրա- «ւունքներ ստացան Ֆրանսայի երախ- «տապարտութեան ։ Նորա ի Պերլին կա- «տարեցին զոր ինչ խոստացած էին «մեզ ։»

Ահա՛ ինչու համար Ֆրանսա կը սի- րէ զՌուսիա, և մասնաւորապէս կը յար- գէ Ալեքսանդր Բ. կայսեր յիշատակն ։

Եւ տեսնե՛ք Ռնչականներն որք , գա- ւելով այնպիսի վեհապետի մը կենաց դէմ, պատճառ՝ եղան Ռուսիոյ ամեն ազգէ ժողովրդեան ազատութեանց աւելի եւս սեղմուելուն , և առաջինք եղան տուժելու և մշտապէս տուժելու, իրենց պժգալի ոճրին համար . . .

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

ԼՍԱՐԱՆ

ԱՍԻԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Ասիական Ընկերութեան երեկի գը- րական և երաժշտական հանդէսը, Բե- րայի Ցունաց Սիլլոգոսին մէջ, կատար- եալ յաջողութեամբ պսակուեցաւ ։ Խուռն և ընտրեալ բազմութիւն մը ամ- բողջովին լցուցած էր Սիլլոգոսի ընդար- ձակ սրահն ։ Եկեղեցական դասէն ներ- կայ էին Գեր. Խորէն Ս. Նար-Պէյ և Արժ. Յովսէփ վրդ. Այվազեան ։

Հանդէսն սկսաւ ֆրանսերէն ատե- նաբանութեամբ Սիլլոգոսի նախա- գահ Գալիատի պէյի որ ջերմագին ու խանդավառ խօսքերով դրուատից հայ գրականութիւնն և գովեց Ասիա- կան ընկերութեան ջանքերը կրթու- թեան գործին համար ։ Ապա, Տիգրան էֆ. Զուհաճեան՝ ընկերակցութեամբ Օր. Թանուէի՝ դաշնակի վրայ նուագելէ յետոյ իւր Օվերթ- օբերայի նախերգան- քը, բեմ ելաւ Տր. Թիրեաքեան և ֆրան- սերէն լեզուաւ մեր առաջ պարզեց գիտութեան յաղթանակներն , մօգիչ հեռապատկերի մը մէջէ ներկայացնե- լով գիտութեան բոլոր նոր գիւտերն և յառաջդիմութիւնքը ։ Ներկայք ծա- փահարութեամբ ընդունեցին սոյն ա- տենաբանութիւն ։

Այնուհետեւ բեմ ելաւ Ռէթէոս էֆ. Պերպէրեան և խօսեցաւ կնոջ վրայ , նախ քան զՔրիստոնէութիւնն , այն պերճախօս լեզուաւ ու հնչուն ձայնով որք զինք առաջնակարգ ատենաբան մը կ'ընեն ։ Պերպէրեան էֆէնտի ներ- կայեց կինն բոլոր հին պետութեանց մէջ, չինական, եգիպտական, բաբելական, եբրայական, հնդկական, պարսկական, հայկական , յունական , հռովմէական , ցոյց տալով կինն մերթ հաւասար այր ու տան տիրուհի և մերթ ստրուկ ու արհամարհեալ, նկարագրելով մերթ հին ընտանիքին սուրբ և անուշ քաղցրու- թիւնները , կամ խնեղչ անբարոյակա- նութիւնքն և վաւաշոտ մոլութիւնները, և իբր եզրակացութիւն՝ պաշտպան կանգնելով կնոջ ազատագրութեան դա- տին ։ Իւր ատենաբանութիւն , գործ լուրջ ուսումնասիրութեան և մանրա- կրկիտ հետազօտութեան , ջերմ ծա- փահարութեամբք ընդունուեցաւ ։

Օր. Թանու նուագեց ապա Զուհա- ճեանի Լէս Օ-չ-ու-ն, անգամ մ'եւս ա- ռիթ տալով մեզ գնահատել հայ ե- րաժշտապետին տաղանդը ։ Ցաւալի է զի հայ ընտանիքներ լոկ հիացմամբ կը վարձատրեն Զուհաճեան էֆէնտիի անձնուիրութիւնն , զոր ցոյց կուտայ նա ազգային սոփորինակ հանդէսներու մէջ , մինչ հայ երաժշտապետն , իւր այնքան տաղանդով ու վարպետու- թեամբ, չկրնար բարեկեցիկ վիճակ մ'ապահովել իրեն ։

Ըստ յայտագրոյն , Լէէ Օ-չ-ու-է յետոյ պիտի բանախօսէր Կարապետ էֆէնտի Դարագաշ , որ սակայն հի- ւանդ լինելով չէր կրցած ներկայ գըտ- նուիլ հանդիսին և նամակաւ ներողու- թիւն խնդրած էր ։

Պելլինի Ս-մ-շ-յէն մաս մը , զոր Օր. Թանու դաշնակի վրայ , Ս. Հոգոց էֆէնտի ջութակի վրայ և Յ. Աշնաւուր էֆէնտի ֆլ-ւ-ւ-էի վրայ նուագեցին ըղ- ձալլելի կերպիւ, մեծ ընդունելութիւն գտաւ և եռանդագին ծափահարու- թեամբք ընդունուեցաւ ։ Ապա , ի դի- մաց Ասիական Ընկերութեան , Պօղոս էֆէնտի Քերէստէճեան խորին շնորհա- կալութիւն յայտնեց Վսեմ. Տիկին Տիւսաք փաշայի որ հանդէսն իւր հո- վանաւորութեան ներքեւ առնլով ան- ձամբ եւս աշխատած էր Լսարանին յա- ջողութեան , և Գալիատի պէյի , որ , սիրայօժար , Սիլլոգոսի սրահը դը- րած էր Ընկերութեան տրամադրու- թեան ներքեւ ։ Տիկին Տիւսաք փաշա յուղեալ բանիւք պատասխանեց այդ շնորհակալութեանց, գովելով Ասիա- կան Ընկերութեան բոլոր անդամոց և ընկերութեան տնօրէն ժողովոյ Ա- տենապետ Այթոն-Տիւրրի Յակոբ է- ֆէնտիին եռանդուն ջանքերն, և հան- դէսը վերջացաւ ընդհանուր գոհունա- կութեան մէջ տեղ ։

Սպիրդէն կը գրեն մեզ թէ Միացեալ Ընկերութեանց տեղւոյն օրիորդաց վար- ժարանի առաջին դասատու Զաքար էֆէն- տի Խանճեան կոմնուածակար մեռեր է ի հասակի 63 ամաց ։ Ցաւակցութիւնն հանրային սուգ մը կհրաւիրանն առեր է Սպերդի ազգայնոց համար , որք հետեւեր են դագաղին ու ցաւակցութեան ցոյցեր ըրեր են հանգուցելոյն դասեր ։

Խասգիւղի Ընթերցասիրաց ընկերութիւ- նըն, ինչպէս անցեալ երկու տարիներ Սահ- մանադրութեան տարեդարձի առթիւ ի նը- պաստ Ազգ. Հիւանդանոցի մէկ մէկ հան- գանակութիւն ըրած էր , նոյնպէս այս տարի եւս , ըստ իւրում սովորութեան , ո- րոշած է ձեռնարկել սոյն բարենպատակ գործոյն , և հետեւեալ Պատ. անձինք եւս մասնախմբի անդամ ընտրած է , որք են՝ Արժ . Տ. Արիստակէս քահանայ Ցարու- թիւնեան և Պ. Պ. Գրիգոր Թէրզեան , կա- րապետ Թէրզեան , Կարապետ Խօրասան- ճեան, Մովսէս Էնքսերճեան, Միհրան Եսա- յաճեան , Յակոբ Գաբրիէլեան , Յակոբ Սա- մանճեան , Միհրան Հիւսէյինճեան , Յակոբ Մխիթարեան , Յակոբ Հալաճեան , Պօղոս Ոսկերիչեան ։

Գործադիր ժողովս յոյս մեծ ունի թէ աջակցութեամբ Պատ. մասնախմբին , եւ շնորհիւ բարեպաշտ Ազգայնոց , այս տարի եւս իւր փափաքը պիտի պսակուի յօգուտ այդ խեղճ և հիւանդ կարօտելոց Ազգային Հաստատութեան ։

Դիւան Գործ. Ժողովոյ

Ատենադպիր — Ատենապետ

ՍԻՄՈՆ ԳԱՎԱՖԵԱՆ — Յ. ԳԱԲՐԻԷԼԵԱՆ

Այսօր իբր Թիրթօն կ'սկսինք հրատա- րակել [illegible] թարգմանեալ գը- ւարճալի յօդուած մը որ պիտի տեւէ վեց եօթն օրի չափ և որ ճշգրիտ նկարագիրն է Եւրոպական այլ և այլ սովորոյթներու ։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ՊԱՏՈՒԱՆՇԱՆՔ

Առաջին կարգի Օսմանիյէ պատ- ուանշան տրուեցաւ Ս. Պապին կրօնա- կան գործոց բարձրագոյն ժողովոյ նա- խագահ Պարոնէ Կարդինալին և արե- ւելեան եկեղեցեաց բարձրագոյն ժո- ղովոյ անդամ Հովարտ կարդինալին ։

Երկրորդ կարգի Օսմանիյէ՝ արարո- ղապետ Տէլլա Տոլբէ կարդինալին , ա- ռաջին սենեկապետ Մօնսինեօռ Մա- քիի և Արտաքին գործոց խորհրդական Մօնսինեօռ Մուչինէի ։

Երրորդ կարգի Մէճիտիյէ՝ սենե- կապետ Մօնսինեօռ Մազօնիի և Ան- ճելիի ։

ԿՐԵՏԷ

Կրէտէի կուսակալ Բօսղաքի փաշա պատրաստեր է կղզւոյն ընթացիկ տար- ւոյ պիւտճէն , կատարուած կամ կա- տարուելու վրայ եղած հանրօգուտ շինութեանց ծախուց վերաբերեալ գումարն դուրս հանելով . միւս կողմէ որոշած է որ կառավարութեան վար- ձակալք , որոցմէ պահանջուած գու- մարներն իրենց շնորհուած էին , հա- տուցանեն զայնս . բաց յաստի , ժան- տարմայից թիւն 200ի իջուցեր եւ անոնց ռոճիկէն 30 ական ղրուշ պակ- սեցուցեր է ։ Հակառակ այս տնօրի- նութեանց , պիւտճէին մէջ երկուք ու կէս միլիոն ղրուշի բաց մը կը մնայ զոր կառավարական գանձը պիտի գոցէ ։

Ընդհանուր ժողովոյ քրիստոնեայ երեսփոխանք կը պահանջեն եղեր որ կղզւոյն մաքսային հասոյթք ամբողջո- վին տեղական պիտոյից յատկացուին , մինչդեռ ցարդ կայս. կառավարութեան վերապահեալ էին որ զինուորական բո- լոր ծախքերն հոգալէ յետոյ , այդ հա- սութից կէսը Կրէտէի պիւտճէի բացը գոցելու կը յատկացուներ ։ Այս խնդ- րոյ վրայ համաձայնութիւն չգոյանա- լով կուսակալին և ընդհանուր ժողո- վոյն միջեւ , քրիստոնեայ երեսփոխանք կազմական կանոնագրոյն հակառակ որոշում մը քուէարկեր են , որ վար- չական մեքենան կը խանգարէ , հրա- ւիրելով ժողովուրդը որ տուրք չվճա- րէ ։ Այսու հանդերձ քուէարկողք կը վարանին եղեր առնուլ այս վերջին քայլն որ բացէ ի բաց ապստամբական վիճակի մէջ կը դնէ զանոնք , ուս- տի և այս որոշման հրատարակու- թիւնն յետաձգեր են ։ Բօսղաքի փա- շա յայտարարեր է թէ չկրնար գոր- ծակցիլ ընդհանուր ժողովոյն , ցորքան այս վերջինն ետ չառնու իւր որոշումը ։ Կուսակալը կը մերժէ միանգամայն ժո- ղովոյն հետ համաձայնութիւն մը գո- յացնելու համար բանակցութեանց հիմ բռնել մաքսային խնդիրը ։ Ժողովը սոյն յայտարարութիւնները լսելով, քանի մը ժամ միջոց խնդրեր է խորհրդակցելու համար, յետ որոյ պատասխաներ է թէ կը պնդէ իւր պահանջմանց վրայ ։

Ս-մ-ղ-ւ-յ՝ ուստից կը քաղենք սոյն տեղեկութիւնները, դիտել կուտայ թէ «ցաւալի է որ Կրէտէի ընդհ . ժողովը կը հետեւի ընթացքի մը որ լաւ հե- տեւանք չկրնար ունենալ ։ Երեսփոխա- նաց կողմէ յարուցեալ խնդիրք կը վե- րաբերին կազմական կանոնագրոյն որ մեծ Տէրութեանց գործն է և չկրնար մէկ օրուան մէջ փոփոխել ։ Ըսել է թէ Կրէտացիք , իրենց այս ընթացքով , կ'ապստամբին ոչ միայն իրենց օրինաւոր պե- տութեան՝ Թուրքիոյ դէմ, այլ և ընդ- դէմ Եւրոպիոյ ։»

* *

*

Կրէտէի օտար հիւպատոսք կուսա- կալին հետ համախորհուրդ կ'աշխատին եղեր ժողովրդեան միտքն հանդարտե- ցնել ։ Հելլենական հիւպատոս Պ. Կրի- բարիս՝ իւր կառավարութեան հրա- հանգաց համաձայն՝ նոյն նպատակաւ կը գործակցի եղեր կղզւոյն իշխանու- թեանց ։

Այսօր Կրետէէ ճամբայ կ'ելնէ պատ- գամաւորութիւն մը որ մէկ իսլամէ և երկու քրիստոնեայ անդամէ կը բաղ- կանայ ։ Սոյն պատգամաւորութիւն մայ- րաքաղաքս գալով իրաց վիճակը պիտի ներկայացնէ Բ. Դրան ։

ՀԱՆՔԱՅ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Անտառաց և Հանքաց ջնջեալ ժո- ղովոյ տեղ վարչական նոր ժողով մը կազմուած է որ ի նիստ պիտի գումա- րի շաբաթն երկու անգամ և ի հարկին աւելի ։ Սոյն ժողովոյ նախագահն է Անտառաց և Հանքաց ընդհ. տնօրէն Վսեմ. Գույումճեան Պետրոս էֆէնտի և անդամք են՝ տնօրէնի օգնական Ճէ- միլ պէյ , գիտական ժողովոյ նախա- գահ Նաղիֆ պէյ , շրջուն քննիչք Րի- զա պէյ, Ցարութիւն էֆէնտի և Կարա- պետ էֆէնտի, հանքաց ընդհ. երկրա- չափ Պ. Վալէր և երկրաչափ Պ. Գոլան ընդհ. քարտուղար կարգուած է Շէ- ֆիք պէյ ։

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

(Առեւտրական Լրատուէն քաղուած)

Հնձոց վրայ առնուած վերջին լու- րերը նուազ գոհացուցիչ են . անձկա- նօք կսպասուի որ անձրեւներ անոնց անոնց վիճակը բարւոքելու համար ։ Թէ Ղալաթիոյ եւ թէ Պոլսոյ կողմէ բաւական թուով գնողք երեւցան ներածեալ մանր ապրանաց համար , թէպէտ հրապարակը կանոնաւորապէս բանուկ չէր ։ Մեծաքանակ ապրանաց վրայ կատարուած գործերը փափա- քելի եղած վիճակը չունին դեռ . Թէ- պէտ քիչ չատ գործառնութիւնք կը լինին , սակայն անկարեւոր գումար- ներով ։ Պատրաստ ապրանաց սակա- ւութեան պատճառաւ ցորենի , ալիւ- րի ինչպէս նաեւ հունտերու գները լաւ բռնուած են ։ Արտածութիւնք քիչ մ'աւելի հաստատ գներով եղան. Թիֆ- տիկի վրայ գրեթէ բնաւ գործ չեղաւ. ափիոնի եւ գազի խէժի գները բըռ- նուած են , բուրդ եւ հունտք աւելի կը փնտռուին ։

—Բ. Դուռը վաւերացուց Իսմայի- լիայի ֆրանսական Նորընտիր դեր-հիւ- պատոս Պ. Սիբիլլի պաշտօնը ։

—Վեց միլիոն ոսկւոյ փոխառու- թեան կնքման համար սկսուած բա- նակցութիւնք ընդհատուեցան , վասն զի գերմանացի դրամատերց ներկա- յացուցիչը Պերլին կ'ուղեւորի ։

—Էնկիւրիէն Առեւտրական Սենե- կին ուղղեալ հեռագիրք պատահմամբ կը խնդրեն որ միջամտէ կայս. կառա- վարութեան քով՝ որպէս զի Թիֆտիկ արտադրող այծերէն առնուած տուրքն իջուցուի ։

—Վերջին ութ աւուրց մէջ առ- նուած լուրերն հարաւային Ռուսիոյ , Ռումանիոյ եւ Ռումէլիի հնձոց մասին երկիւղներ կ'ազդեն ։ Այս վերջին գա- ւառի մէջ մանաւանդ լուրերն անպի- տի վիճակի մը հասած են , որ եթէ սակաւիկ մ'եւս չանձրեւէ , հունձքերը բոլորովին կորսուած պիտի նկատուին ։

—Կղզիներու բնակիչք հանրագիր մը մատուցանելով առ որ անկ է խընդ- րած են որ շոգենաւուց երթեւեկու- թեան գներն որք վերջերս աւելցած էին իրենց նախկին վիճակին վերած- ուին ։ Աղերսարկուք իրաւամբ դիտել կուտան թէ պարզ արհեստաւորաց համար անկարելի է օրական 5-6 ղրշ. շո- գենաւու անցագին վճարել . Թէ , բաց աստի , այդ բարձր անցագինք կ'ա- հաբեկեն ժողովուրդն որ այլ եւս չեր- թար կղզիներն անցունել ամրան եղա- նակը որով մեծ վնաս կը հասնի կղզի- ներու բնակչաց որք ապրուստի ուրիշ միջոց չունին ։

—Իզմիրէն և Սելանիկէն առնուած նամակներ կը ծանուցանեն թէ՝ այդ քաղաքաց մէջ փութով առաջ կը տար- ուի Րէժիի կողմէ վճարեալ ոստիկա- նաց խումբերու կազմակերպութիւնն ։ Ցայտնի է թէ այդ ժանտարմայք պի- տի յաջորդեն դէտերուն , և այս փորձ այդ երկու քաղաքաց և Պրուսայի ու մայրաքաղաքիս մէջ փորձուելէ յետոյ, եթէ յաջողի , պիտի ընդհանրացուի ։

Նոր դէտերն , որք ոստիկանական համազգեստ պիտի կրեն , ենթարկեալ են ոստիկանական կանոնաց ։

ԿԱԼՈՒԱԾԱԿԱՆ ՏՈՒՐՔ

Կը յիշուի թէ կայս. հրամանաւ կալուածական տրոց վրայ յաւելում մ'եղած էր ։ Արդ , Ելմտական Նախա- րարութիւնը շրջաբերականներ ուղղե- լով ամեն կողմ, ծանուցած է թէ սոյն յաւելումէ ազատ պիտի մնան այն տուներ՝ որոց մէջ տանուտէրն ինք կը բնակի ։ Եթէ մարդ մը մէկ տուն միայն ունի և եթէ այդ տան արժէքը քսան հազար ղրուշէն վար է , ըստ առաջ- նոյն հազարին չորս , իսկ եթէ քսան հազարէն վեր է , հազարին ութ տուրք պիտի վճարէ ։ Ուստի նկատելով որ մէկ անհատի մը սեփականութիւնն եղող մէկէ աւելի տուները , բաց ի իւր բը- նակութեան յատկացեալ տունէն, իբ- րեւ անշարժ կալուած կը նկատուին , սոյքա վարձու տրուին թէ ոչ և ար- ժէքնին քսան հազար ղրուշէ աւելի լի- նի թէ ոչ, կալուածատրոց վրայ եղած յաւելումէն ազատ չ'պիտի նկատուին , նոյնպէս հազարին տասը ղրուշ տուրք պիտի առնուի այն գետիններէ և բան- ջարեղէնի պարտէզներէ , որք ցարդ հազարին ութ տուրք կը վճարէին և ազատ էին տասանորդական տուրքէ ։

ԱՌՆԱՎՈՒՏԳԻՒՂԻ ՀՐԿԻԶԵԱԼՔ

Հետեւեալ նոր նուիրատուութիւնք եղած են ի նպաստ Առնավուտգիւղի հրկիզելոց .

	Ղրշ.
Գումար նախորդ ցուցակաց	89,493
Մեծ-Եպարքոս Քեամիլ փաշա	2,000
Դատական նախարարութիւն	785
Պետական Խորհրդոյ պաշտօնեայք	540
Ադրիանուպոլսէն	5,400
Արեւ. Ռումէլիի Եէնի-մահալլէ գիւղացի Գոքերի եղբարք	5,000
Ֆէներէ յոյն վարժարանի աշակերտք	864
Գումար ղրշ.	104,082

Հինգշաբթի օրը եկաւ կայսերա- կան Իրատէն որ կը վաւերացունէ ե- գիպտական պայմանագրոյն կցեալ յա- ւելուածն որ զինուորական կէտերուն կը վերաբերի ։ Շաբաթ օրն ստորա- գրուեցան այդ յաւելուած ինչպէս նաեւ ուրիշ քանի մը Թղթեր որք կը պարունակեն օսմանեան պատուիրա- կաց և բրիտանական պատուիրակին միջեւ կատարուած բանակցութեանց արդիւնքն ։

—Այն ունկնդրութեան՝ զոր Վեհ . Սուլթանն այս ուրբաթ օր շնորհեց անգլ. դեսպանին , ներկայ էին արա- րողապետ Մունիր փաշա և դեսպանա- տան առաջին թարգման Սըր Ալֆրէտ Սանտիսըն ։ Դեսպանը Վեհ. Սուլթանին մատոյց Թագուհւոյն շնորհակալու- թիւններն այն բարեմաղթութեանց հա- մար զորս Ն. Վեհափառութիւն ուղ- ղած էր նորա ծննդեան 68րդ տարե- դարձին առթիւ ։ Թագուհւոյն յոբել- եանը մօտ լինելով, Վեհ. Սուլթանն ո- գուտ քաղեց այս առիթէն արտայայ- տելու համար իւր խորին համակրանքը Մեծին Բրիտանիոյ Թագուհւոյն նկատ- մամբ ։

Ունկնդրութեան միջոցին Վեհ. Սուլ- թանն և Սըր Ուիլլիէմ Հուայդ գլխա- ւորաբար խօսակցեցան եգիպտական պայմանագրոյն վրայ որ նոր կնքուե- ցաւ ։

—Այս ուրբաթ օր մարտի ամսա- թոշակը վճարուեցաւ զինուորական սպայից եւ պաշտօնատարաց ։ Երէկ եւս Սպարապետի Դրան բոլոր պաշտօնէից մարտի ամսաթոշակները վճարուեցան ։

—Ցունաց նախկին պատրիարք Տ. Յովակիմ Գ. Երուսաղէմէն Աղեքսանդ- րիա ուղեւորեր է ուստից Այնօրօզի վանքն այցելելէ յետոյ մայրաքաղաքս պիտի վերադառնայ աշնան մէջ ։

—Վեհ. Սուլթանը գնդապետու- թեան աստիճան շնորհեց ծովային տե- ղակալ-գնդապետ Նէ-Համ Մէհմէտ Թէվֆիք պէյի ։

—Մաքրիսայի պահեստի զօրաց գըն- դապետ անուանեցաւ Սպարապետի Դրան ընդհանուր պիտոյից երկրորդ ճիւղի տնօրէն Մուստաֆա Իզզէթ պէյ ։

—Մարդահամարի յատուկ օրինաց համաձայն ամեն անոնք որք [illegible] չունին մէկ Մէճիտէէն մէկ ոս- կի տուգանաց եւ քսան—չորս ժա- մէ մինչեւ մէկ ամիս բանտարկութեան կը դատապարտուին ։ Ներքին գործոց նախարարութիւնը նկատելով որ պատ- ժական օրէնքը խտիր մը չը դներ ա- րանց եւ կանանց միջեւ եւ նկատելով որ այս՝ ոճրագործ կանանց միայն յա- տուկ է , ծանոյց ամեն կողմ թէ [illegible] չունեցող կիները չէ կա- րելի երբեւ այր պատժել , վասն զի ի- րենց վիճակի մասնաւորութիւնն ար- գելք կը լինի առ այդ , այլ միայն պէտք է ուշադրութիւն ընել որ այդ- պիսի դէպքեր տեղի չունենան ։

—Մաքսատան ժողովոյ նախկին նա- խագահ Շաքիր էֆէնտի , որ Րէժիի վարչութեան մէջ պաշտօն մը կը վա- րէր , հրաժարեր է ։

—Ելմտական նախարարութեան հը- րամանաւ Ալյօրնի նահանգին ուղղակի տրոց տնօրէն Ալի էֆէնտի մայրաքա- ղաքս եկաւ ։

—Կայս. կառավարութեան եւ Պա- ռոն Հիրշի միջեւ եղած հաշուական խնդիրը քննելու պաշտօն ունեցող յանձնաժողովը նախընթաց օր ի նիստ գումարեցաւ Արտաքին գործոց պաշ- տօնատան մէջ ։

—Երկրորդ զօրաբանակի Պրուսայի պահեստի զօրաց միրլիվա Գատրի փա- շա , որ երկար ատենէ ի վեր անկող- նոյ կը ծառայէր , մեռաւ ։

—Սելանիկէն մայրաքաղաքս ժա- մանեց Ելմտական Նախարարութեան հասութից գանձման տնօրէն Սիւլէյման պէյ ։

—Պուքրէշի աւստրիական դեսպան Պ. Մայէր , որ իբրև հիւր մայրաքա- ղաքս կը գտնուի , նախընթաց օր այ- ցելութիւն տուաւ Պետական Խորհր- դոյ նախագահ Բարձր. Արիֆի փաշա- յի և կայս . բժշկական վարժարանի վերատեսուչ Մարքօ փաշայի ։

—Ֆրանսական և ռուսական դես- պանք շաբաթ օրը Բ. Դուռն երթալով տեսակցեցան Բարձր. Մեծ-Եպարքո- սին և Արտաքին գործոց Վսեմ. Նա- խարարին հետ ։

—Շաբաթ օրը Տրապիզոնէն մայ- րաքաղաքս ժամանեց Վեհ. Սուլթանի թիկնապահներէն Միրլիվա Ալի փաշա ։

—Ելմտական Նախարարութեան ո- րոշմամբ , գիւղաքաղաքաց ոմանց տրոց քարտուղարներու պաշտօնը ջնջուեցաւ ։

—Երէկ մայրաքաղաքս ժամանեց Բաղէշի Նախորդ մէքդուպճի Մուխթար պէյ ։ Նորա յաջորդը Սաֆվէտ պէյ եւս երէկ իւր պաշտօնատեղին ուղեւորե- ցաւ ։

—Ռումէլիական երկաթուղեաց մի- ացման գծերու շինութեան ընկերու- թեան գլխաւոր երկրաչափ Պ. Թրիտոն շաբաթ օրը Սելանիկ ուղեւորեցաւ ։ Նոյն ընկերութեան քննչութեան ճիւ- ղին երկրաչափ Պ. Լըֆէվռ, որ իւր կինը Փարիզ առաջնորդեց , անտի պիտի եր- թայ միանալ Պ. Թրիտոնի՝ գծերու ընդհանուր վիճակն աչքէ անցունելու համար , յետ որոյ պիտի կատարուի անոնց պաշտօնապէս յանձնումն առ Օսմ. Յանձնաժողովն , որուն կը նա- խագահէ Խայրի պէյ ։

—Արեւ. Ռումէլիի դատական գոր- ծոց նախկին տնօրէն Պ. Պօպչէֆ , որ Ռումէլիցի միւս փախստականաց հետ մայրաքաղաքս ապաստանած՝ լաւագոյն օրերու կ'սպասէր , Պետրպուրկ ուղեւ- որեցաւ Պ. Կէչոֆի միանալու ։ Այս կերպով կը հաստատուի այն լուր թէ պուլկար փախստականաց կողմէ պատ- գամաւորութիւն մը գնացած է Ռու- սիոյ մայրաքաղաքը , սա տարբերու- թեամբ թէ այդ պարոնայք փոխանակ խմբովին մեկնելու , առանձին առան- ձին ճամբորդած են ։

—Դարդանէլլի անգլ. հանգուցեալ հիւպատոս Ժ. Մէլէնկի որդի Պ. Ֆրէ- տէրիք Մէլէնկ՝ Բօր-Սայիտի հիւպատոս անուանեցաւ ։

—Պելճիոյ Ճօն Քօքքրիլ ընկերու- թեան երկրաչափ Պ. Մաքս Ռէօլ մայ- րաքաղաքս եկաւ ։

—Դաստամօնիի Իտարէի ժողովն երկու տարուան բանտարկութեան և երեք տարուան պաշտօնանկութեան դատապարտեր է նահանգին Կեօքէ գիւղաքաղաքի Թահրիլ քարտուղարն որ 68,000 ղրուշի գումար մը իւրացու- ցած էր կառավարական սնտուկէն ։ Քարտուղարը միանգամայն դատա- պարտուած է իւրացուցած գումարը վճարելու ։

—Զ[illegible] վարժարանի հիմնադիր Բօս- ղանջէն Զարաֆ եղբօրորդի Տր . Խրիստօ Զարաֆ մայրաքաղաքս եկաւ ուստից Թեսա- ղիա պիտի երթայ իւր հօրեղբօր կալուած- ներն աչքէ անցունելու համար ։

—Երէկ ցաւալի արկած մը պատահեցաւ Եէնի-գաբու ։ Բիւզիկիւճի Քերովբէ ազայի Թոռ , Միհրդատ անուն մանկիկ մը տան վ'րնայարկի պատուհանէն փողոց իյնալով , իսկոյն մեռաւ ։

—Գա[illegible] որմնէպ Ճէմիլէն , որ ինչպէս կը յիշուի մէկ քանի անգամներ իւր սէռը փոխած և վերջապէս բռնական կողմ յաղթելով կին եղած էր , Սպարա- պետութեան կողմէ հայրենիքը ղրկուելով իւր ծնողաց յանձնուեր է ։

—Մայիս 2/14 ին վերջացող շաբթուն մէջ Այտընի երկաթուղեաց ընկերութեան հասոյթն եղած է 3,246 անգլ. ոսկի , մինչ անցեալ տարւոյ մի և նոյն շաբթուան հա- սութից գումարն էր 3169 ոսկի ։ Նոյն Թը- ուականին վերջացող 20 շաբաթներու մէջին հասոյթն է 3471 ական ոսկի , մինչ 1886 մայիս 2/14 ին վերջացող 20 շաբաթներու հասոյթն եղած էր 2998 ական ոսկի ։

—Աւստրիական դեսպան Պառոն տը Քա- լիչէ իւր բնակութիւնը Պէօյիւքտէրէի ա- մարանոցը փոխադրեց այս շաբաթ օր ։

